մուտք գործել երկրի ներքին գավառները։ Ուժերի այս ջլատման պայմաններում, երբ չկար միասնական ղեկավարություն, դժվար է որոշակի խոսք ասել 1726 թ. մարտի 24 թվակիր աղերսագրի շարադրման հանգամանքների մասին։ Մի բան պարզ է, որ, ինչպես դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, Կասպից ծովեզերքում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությունը իրավասու չէր ռազմական օգնություն ցուցաբերելու ո՛չ Ղափանում և ո՛չ էլ Ղարաբաղի սղնախներում օսմանյան զորքերի դեմ մենամենակ մարտնչող հայ զինվորությանը, քանի որ 1724 թ. օսմանցիների հետ կնքված պայմանագրով համաձայնություն էր կայացել, որ Ատրպատականն ու ամբողջ Անդրկովկասը, բացի ծովափնյա շրջաններից, պետք է ռազմակալման ենթարկվեին օսմանյան զորքերի կողմից։

Առանձին հոդվածում անդրադառնալով այս ուղերձ-աղերսագրին, Ա. Միրզոյանը, համադրելով այն «Պատմության» տվյալների հետ և ելնելով Դավիթ-բեկի ու Մխիթարի փոխհարաբերություններում մերթընդմերթ առաջացած և հաճախ սուր բնույթ ստացած տարաձայնությունների փաստից, հավանական է գտնում, որ այդ ծանր օրերին ևս հակասություններ են եղել նրանց միջև, որպիսի պայմաններում Մխիթարը, սեփական նախաձեռնությամբ, համախոհ մի քանի այլ յուզբաշիների ընկերակցությամբ, փորձել է կապ հաստատել ռուսական բանակի հրամանատարության հետ և օգնություն ստանալ նրանցից[9]։

Ժամանակին առիթ է եղել նշելու, որ ստեղծված պայմաններում դիմադրական ուժերի կազմալուծմանը նպաստել են դասակարգային ներհակություններն ու դրսից ակնկալվող օգնության և օսմանցիների դեմ անհավասար պայքարում դաշնակիցներ որոնելու վերաբերյալ թեր և դեմ կարծիքները[10]։ Երբ քննության ենք առնում 1726 թ. Ղափանում ստեղծված իրավիճակը, դժվար չէ նկատել, որ օրհասական այդ օրերին, սկզբից ևեթ Ռուսաստանի օգնությանը ապավինած և ներկա դեպքում դիմադրությունը շարունակելու կողմնակից հայ զինվորականությունը պիտի փորձեր օգնություն ստանալ այդ կողմից, որը կգար նաև ի կատար ածելու մահմեդական բռնատիրության լծից հայ ժողովրդի ազատագրության դարավոր երազանքը։ Սակայն, ինչպես վերը նշվեց, 1724 թ. կնքված ռուս-թուրքական պայմանագիրը բացառում էր Կասպից ծովի առափնյա շրջանները նվաճած ռուսական զորքերի որևէ շարժում դեպի Անդրկովկասի ներքին նահանգներ։

Այս պարագաներում, ինչ խոսք, կարող էին և տարաձայնություններ առաջանալ շարժման ղեկավարների միջև։ Առավել իրատես անձինք, ինչպիսին էր պետական ու զինվորական գործունեության անցյալ ունեցող Դավիթ-բեկը, հստակորեն վերլուծելով քաղաքական իրադրությունը, չէին կարող հույսեր կապել այդօրինակ օգնության հետ։ Իսկ լավատեսորեն տրամադրվածները, առանց հաշվի առնելու վերոհիշյալ անբարենպաստ քաղաքական զարգացումները, ավանդական մղումներով կարող էին պնդել՝ մեկ անգամ ևս նման մի աղերսագրով դիմելու հզոր Ռուսաց տերությանը, որպես քրիստոնյաների ազատարարի, խնդրելով «վասն Քրիստոսի սէրն» օգնության հասնել գոյամարտի ելած հայությանը[11]։

Երբ ելնում ենք այն իրողությունից, որ քննարկվող պատմական ժամանակահատվածում ազատագրական պայքարի դրոշ պարզած լեռնաշխարհի հայության գլխավոր թշնամին իրանական բռնակալական լծի տակ տառապած Անդրկովկասի ժողովուրդներին հրի և սրի ուժով իրեն ենթարկելու և ստրկացնելու նպատակով արշավանքի ելած օսմանյան զորքերն էին, ինքնին պարզ է

---

9 Ա. Միրզոյան. Մխիթար-բեկի կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 90—94։

10 Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 171։

11 П. Арутюнян. Послание Мхитар-бека русскому правительству.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 3, էջ 98—99։